ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2023 թ. օգոստոսի 29-ի թիվ 1 նիստի

Մինչ օրակարգի հաստատումը ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ դեկան Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանի հրամանով ժուռնալիստիկայի ֆակուլտետի Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նույն ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գոռ Աբրահամյանը: Դոցենտ Աբրահամյանը համաձայնել է պաշտոնավարել հասարակական հիմունքներով՝ մինչև ամբիոնի վարիչի մրցութային ընտրություն: Ներկաները շնորհավորեցին Գ. Աբրահամյանին և մաղթեցին արդյունավետ գործունեություն:

Այնուհետև Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը 2023/2024 ուստարվա նախապատրաստական աշխատանքների մասին:

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ նոր ուստարվան նախապատրաստվել ենք հավուր պատշաճի, ավարտել ենք բոլոր աշխատանքները, որպեսզի մեկնարկը լինի նախատեսվածին համահունչ:

Դեկանը հանգամանորեն անդրադարձավ առանցքային բոլոր խնդիրներին և պատասխանեց գիտխորհրդի անդամներին հուզող հարցերին:

Անդրադարձ եղավ աշխատանքային կարգապահությանը և ուսանողների հաճախումներին վերաբերող հարցերին: Ն. Մարտիրոսյանը ՌԷՄ նախագահ Է. Թևոսյանին առաջարկեց այս հարցում մեկտեղել ջանքերը, ձևավորել ուսումնառության և աշխատանքի համար գրավիչ, արդյունավետ և պատասխանատու միջավայր:

Հարցի առնչությամբ արտահայտվեցին գիտխորհրդի ուսանող անդամները՝ ներկայացնելով իրենց մտահոգությունները և ակնկալիքները:

Քննարկվեցին նաև «Պրակտիկում» մոդուլ-դասընթացին վերաբերող խնդիրները, որոնք առնչվում էին դասընթացի կազմակերպմանը և արդյունավետության բարձրացմանը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Լ. Կ. Սայադյան, Ա. Շ. Ավետիսյան, Ա. Դ. Հակոբյան, Է. Ի. Թևոսյան, Ա. Մ. Մարտիրոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Ն. Մարտիրոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Փորձարարական հեռուստատեսության մեկնարկի մասին դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը: Նա տեղեկացրեց, որ մեկնարկը տրվելու է առկա հնարավորություններով և տեխնիկական այն միջոցներով, որոնցով կահավորված է ֆակուլտետի Ինովացիոն մեդիակենտրոնը:

Ն. Մարտիրոսյանը նաև ասաց, որ ռեկտորին է ներկայացրել անհրաժեշտ տեխնիկական նոր միջոցների ցանկը, որոնց առկայությունը հնարավորություն կտա ապահովելու օպերատիվություն և որակ: Աշխատանքի մեկնարկի և առկա ծավալի

հաշվառումից հետո Ն. Մարտիրոսյանը խոստացավ դիմել ԵՊՀ ռեկտորին ֆակուլտետին առնվազն երկու հաստիք տրամադրելու առաջարկ-խնդրանքով (հնչյունային ռեժիսոր-մոնտաժող, օպերատոր-ռեժիսոր):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Զ. Զ. Սարգսյան, Դ. Հ. Ալավերդյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյանի առաջարկը անվանական կրթաթոշակների հավակնորդների թեկնածությունների հաստատման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Լ. Կ. Սայադյան,Ա. Ռ. Մենեմշյան, Է. Ի. Թևոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Արտակի Հակոբյանին 2023 թ. սեպտեմբերի 1-ից ստանալու «Հարություն քահանա Շմավոնյան» կրթաթոշակը, իսկ բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Հրայրի Եղիազարյանին՝ 2023 թ. սեպտեմբերի 1-ից ստանալու «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակը:

ԼՍԵՑԻՆ.- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի նախկին հայցորդ (2014-2019 թթ.) Մարիաննա Տիգրանի Հակոբյանի խնդրանքը ատենախոսության թեմայի վերախմբագրման առաջարկով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Մ. Տ. Հակոբյանի ատենախոսության թեման վերախմբագրված տարբերակով՝ «Նախընտրական հեռուստաբանավեճը հայաստանյան հեռուստաեթերում (2003-2021 թթ.):

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի առկա ուսուցման անվճար համակարգի առաջին տարվա ասպիրանտ Գարիկ Կարոյի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Դ. Հ. Ալավերդյան, Զ. Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Գարիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Արհեստական բանականության կիրառման առանձնահատ–կությունները հայաստանյան առցանց մեդիայում» վերնագրով:

բ) Գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանին:

Նիստի օրակարգի ավարտից հետո Ն. Մարտիրոսյանն առաջարկեց լսել Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի դոցենտ, բ.գ.թ Ա. Ավետիսյանի հաղորդումը օգոստոսի 6-ից 21-ը Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանում կազմակերպված Գովազդի և PR-ի միջազգային ամառային ինստիտուտին իր մասնակցության մասին: Ա. Ավետիսյանը ներկայացրեց երկշաբաթյա այցի ուշագրավ մանրամասները և պատասխանեց գիտխորհրդի անդամների հարցերին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ջ. Ջ. ՍԱՐԳՍՅԱՆ